Հանդիպման ավարտին Սերժ Սարգսյանն անվանի գիտնականներին հրավիրել է մասնակցելու և իրենց ներկայությամբ պատվելու նախագահի նստավայրում հանդիպումից անմիջապես հետո անցկացվելիք տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում ՀՀ նախագահի 2013 թ. կրթական պարգևների հանձնման հանդիսավոր արարողությունը, շփվելու հայ տաղանդաշատ աշակերտների և ուսանողների հետ, խրախուսելու նրանց: Գիտնականները սիրով ընդունել են նախագահի հրավերը՝ մասնակցելով միջոցառմանը:

«Գիտություն», հոկտեմբեր, № 10, 2013 թ.

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐԸ

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրերով Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի 70-ամյակի կապակցությամբ, գիտության և կրթության բնագավառում ունեցած մեծ վաստակի համար Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումներ են շնորհվել.

Գիտության վաստակավոր գործչի՝

Համլետ Ամբակումի ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ՝ *ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տեսական փիլիսոփայության բաժնի ղեկավար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս*

Մաղլենա Ժիրայրի ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ՝ *ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի լաբորատորիայի խմբի ղեկավար, քիմիական գիտությունների դոկտոր*

Սերգեյ Հովհաննեսի ՄՈՎՍԵՍՅԱՆԻՆ՝ *ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի գիտական ղեկավար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս*

Աշոտ Սերոբի ՍԱՂՅԱՆԻՆ՝ *ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս*

Արվեստի վաստակավոր գործչի՝

Աննա Գրիգորի ԱՍԱՏՐՅԱՆԻՆ՝ *ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր:*

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի 70-ամյակի կապակցությամբ, գիտության և կրթության բնագավառում մատուցած ակնառու ծառայությունների համար պարգևատրվել են.

Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշանով՝

Նորայր Հունանի ԱՌԱՔԵԼՅԱՆԸ՝ *ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար*

Անանիա Շիրակացու մեդալով՝

Արսեն Ալեքսանդրի ՀԱԽՈՒՄՅԱՆԸ՝ *ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրեն, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու*

Ռուբեն Վիկտորի ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ՝ *ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտի ինտեգրալ և ստոխաստիկ երկրաչափության բաժնի վարիչ, ՀՀ - ԳԱԱ ակադեմիկոս*

Ռաֆայել Լևոնի ՄԵԼՔՈՆՅԱՆԸ՝ *ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի օգտակար հանածոների և պետրոլոգիայի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*

Անահիտ Խորենի ՉԱԽԱԼՅԱՆԸ՝ *ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների թեկնածու*

Արամ Վարդգեսի ՊԱՊՈՅԱՆԸ՝ *ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*

Վլադիմիր Գրիգորի ՍԱՀԱԿՅԱՆԸ՝ *ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրեն, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու*

Արմեն Կառլենի ՍԱՂԱԹԵԼՅԱՆԸ՝ *ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի տնօրեն, երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

Ժիրայր Հմայակի ՎԱՐԴԱՆՅԱՆԸ՝ *ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*

Մովսես Խորենացու մեդալով՝

Սարգիս Բարդուղիմեոսի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ՝ *ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության տեսության և պատմության բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*

Վլադիմիր Լիպարիտի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ՝ *ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*

Ալբերտ Գուրգենի ՍԱՐԳՍՅԱՆԸ՝ *ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրեն, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր*

Վերժինե Գառնիկի ՍՎԱՋԼՅԱՆԸ՝ *ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր:*